Արձանագրություն N 2

<<ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/16>> ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի Վարդենիսի դպրոցի կառուցման (մնացորդային) աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

27.11.2019թ.
ժամը 17:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահող՝ Ռ. Եղիազարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Շատվերյան
Ար. Գրիգորյան
Գ. Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան
Բացակայում էր՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միրզոյան

1. ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/16 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի մասին

(Ռ. Եղիազարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Գնման գործընթացն իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

բ) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 26.11.2019թ., ժամը 11:30-ին:

գ) Գնման առարկայի նախահաշվային արժեքը կազմում է 795 940 (յոթ հարյուր իննսունհինգ հազար ինը հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

դ) Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

ՀՀ դրամ

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Հասցե*	*Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)*	*ԱԱՀ*	*Առաջարկված ընդհանուր գինը*
1	<<Բագարանի Բարիք>> ՓԲԸ	Արմավիրի մարզ, գ. Բագարան	750 000		750 000

ե) Հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում 26.11.2019թ. նիստի ընթացքում պարզվել է, որ մասնակցի ներկայացրած Հավելված N1-ի 3-րդ կետում նշված է, որ պայմանագրի կատարումն իրականացվելու է թվով 2 աշխատակիցների միջոցով՝ հրավերով պահանջվող նվազագույնը 3 աշխատակիցների փոխարեն:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և ծանուցել <<Բագարանի Բարիք>> ՓԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունը, որն էլ սահմանված ժամկետում արվել է վերջինիս կողմից:

զ) Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել 27.11.2019թ. ժամը 10:30-ի նիստը և ծանուցել հրավերի պահանջներին բավարարող գնահատված մասնակցին՝ <<Բագարանի Բարիք>> ՓԲԸ-ին (այսուհետ՝ Մասնակից) առաջարկված գնի նվազեցման նպատակով 29.11.2019թ. ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ, 460 սենյակ հասցեում կազմակերպվող բանակցությունների մասին:

Մասնակցի կողմից ներկայացվել է գրություն այն մասին, որ վերջինս չի մասնակցելու բանակցություններին և գնային առաջարկը մնում է անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/16 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակցի մասին

(Ռ. Եղիազարյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից հայտը գնահատվել է հետևյալ կերպ

Մրցույթում զբաղեցրած տեղը	*Մասնակցի անվանումը*	*Հայտի գնահատականը*
1	<<Բագարանի Բարիք>> ՓԲԸ	բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղն զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ռ. Եղիազարյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշում է.

ա) ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

բ) Ծանուցել 1-ին տեղն զբաղեցրած Մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

4. ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/16 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ռ. Եղիազարյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա

ընթացքում ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահող՝ ---------- Ռ. Եղիազարյան

Անդամ՝ ---------- Դ. Շատվերյան

---------- Ար. Գրիգորյան

---------- Գ. Գևորգյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան